# Ո՞Վ Է ԼԻՆԵԼՈՒ ԲՐՈՒՏՈՍԸ

Հանրապետութեան ԳԽ նախագահի եւ Գորբաչովի հանդիպումը ոչ միայն ցանկալի արդիւնք չտուեց եւ չհաստատեց խաղաղութիւն սահմանամերձ տարածքներում, այլեւ սկսուած սրընթաց պետական տեռորը ներառաւ նոր շրջաններ: Նոյեմբերեան-Իջեւան-Գորիսին աւելացան այսօր Վարդենիսն ու Տաուշը: Սովետական բանակի եւ ՕՄՕՆական հրոսակախմբերը ծրագրուած վրէժ են լուծում հայ ժողովրդից իր Արցախեան պահանջատիրութեան եւ անկախութեան ձգտումների համար:

Այնքան պարզ է նրանց .ուզածը եւ այնքան դժուար է մեր ձեռքով մեր շէներն աւերել տալը, որ նոյնիսկ, ըստ մեզ հասած լուրերի, Հայկոմկուսի ղեկավարը չի համաձայնում զօրք հրաւիրել Հայաստան, որը ըստ նոյն լուրերի, պատճառ է դարձել նրա հրաժարականին:

Այսօր Հայկոմկուսը նոր ղեկավար ընտրելու կնճիռն է փորձում լուծել, բայց այնպէս, որ Բրուտոս չլինի: Կը յաջողուի դա նրանց, թէ չէ, պարզ կը դառնայ մօտ օրերս: Համենայն դէպս, թւում է, թէ թեկնածուներ շատ չեն լինի: Սակայն ով էլ ընտրուի՝ Մոսկուան ընդունարաններում կը սպառի նրանց, քանի դեռ գործով չեն համոզել, որ կրկնելու են Խ.Աբովեանի խօսքերը. «Օրինուի էն սհաթը...»:

Ա.Քերոբեան